



Մ ՈՒՐԲ ԶԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ԱՄՅՐ ԵՒ ԿԵՂԵՅԻ



ԾԱՆՈՒԵԱՆ ԵՐԿՐՈՐԻ ՕՐ

07 ՅՈՒՆԻՈՒՐ 2018

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ	1
Նոր Արարածը (2)	Էջ	3

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ ԳԻՐՔԷՆ

(6.8-8.2)

Ստեփանոս Աստուծոյ շնորհքով եւ զօրութեամբ լեցուն մարդ մըն էր, որ ժողովուրդին մէջ մեծամեծ հրաշքներ կը կատարէր եւ նշաններ ցոյց կու տար: Այդ իսկ պատճառով, Լիպիացիներու, Կիրենացիներու, Աղեքսանդրացիներու, Կիրիկեցիներու եւ Ասիացիներու ժողովարանէն կարգ մը Հրեաներ եկան Ստեփանոսի հետ վիճաբանելու: Սակայն չէին կրնար դէմ դնել անոր իմաստուն եւ Սուրբ Հոգիէն ներշնչուած խօսքերուն: Այն ատեն քանի մը հոգի կաշառեցին, որպէսզի անոնք վկայութիւն տան, ըսելով.

- Անձամբ լսեցինք, որ այս մարդը Մովսէսի եւ Աստուծոյ դէմ հայհոյալից խօսքեր կ'ընէր:

Այս ձեւով զրգռեցին ժողովուրդը, երէցները եւ Օրէնքի՝ ուսուցիչները, եւ Ստեփանոսի վրայ յարձակելով՝ զայն բռնեցին Ատեան բերին: Ապա մէջտեղ բերին սուտ վկաները, որունք կ'ըսէին.

- Այս մարդը անդադար հայհոյալից խօսքեր կ'ընէ այս սրբավայրին եւ Աստուծոյ Օրէնքին դէմ: Անձամբ լսեցինք որ կ'ըսէր՝ թէ՛ Նազովրեցի Յիսուսը պիտի քանդէ այս տաճարը եւ պիտի փոխէ այն աւանդութիւնները որ Մովսէս մեզի տուաւ:

Ատեանի մէջ նստողները իրենց հայեացքը Ստեփանոսի դարձուցին եւ տեսան անոր դէմքը, որ հրեշտակի դէմքի կը նմանէր:

Քահանայապետը հարցուց Ստեփանոսի.

- Իրա՞ւ են ըսուածները:

Եւ անիկա պատասխանեց.

- Եղբայրներ եւ հայրեր, մտի՛կ ըրէք ինձի: Երբ Աբրահամ, մեր հայրը, տակաւին միջագետք կ'ապրէր նախ քան Խառան բնակիլը, Աստուած, որուն կը պատկանի փառքը, երեւցաւ անոր եւ ըսաւ. «Ե՛լ քու երկրէդ, ձգէ՛ քու ազգականներդ եւ եկուր բնակէ այնտեղ՝ որ ցոյց պիտի տամ քեզի»: Այն ատեն Աբրահամ Քաղդէիացիներու երկրէն ելաւ եւ եկաւ Խառան բնակեցաւ. իսկ Աբրահամի հօր մահուանէն ետք, Աստուած զայն հոնկէ ալ հանեց եւ փոխադրեց այս երկիրը, ուր հիմա դուք կը բնակիք: Այս երկրին մէջ թիզ մը հող իսկ ժառանգութիւն չտուաւ

Աբրահամի. սակայն այս երկիրը որպէս բնակավայր խոստացաւ տալ իրեն եւ իրմէ ետք իր սերունդին, երբ դեռ Աբրահամ զաւակ չունէր: Աստուած այսպէս ըսաւ. «Քու սերունդդ պանդուխտ պիտի ըլլայ օտար երկրի մը մէջ. պիտի ստրկացնեն ու պիտի չարչարեն զայն, չորս հարիւր տարի: Բայց ես ինքս պիտի դատեմ այն ազգը, որուն ստրուկ պիտի ըլլան անոնք, - Կ'ըսէ Աստուած, - որմէ ետք պիտի ելլեն հոնկէ եւ այստեղ պիտի գան զիս պաշտելու համար»: Աստուած թլփատութեան պատուէրը տուաւ Աբրահամին, որպէս ուխտի նշան: Այնուհետեւ Աբրահամ Իսահակը ծնաւ եւ ութերորդ օրը զայն թլփատեց: Իսահակ Յակոբը ծնաւ եւ թլփատեց, եւ Յակոբ՝ տասներկու նահապետները:

Յովսէփի եղբայրները իրեն նախանձելով՝ զայն Եգիպտոս դացող կարաւանին ծախեցին: Սակայն Աստուած անոր հետ էր. զայն փրկեց բոլոր նեղութիւններէն, Եգիպտոսի թագաւորին՝ փարաւոնի աչքին զայն բարձրացուց իր իմաստութեամբ, եւ Եգիպտոսի ու փարաւոնի տան վրայ իշխան կարգեց: Ապա երաշտ եղաւ ամբողջ Եգիպտոսի եւ Քանաանի մէջ. սաստիկ սով տիրեց եւ մեր հայրերը ուտելիք չէին գտներ: Յակոբ երբ լսեց թէ Եգիպտոսի մէջ ուտելիք կարելի է ձուրկել, հոն ղրկեց իր զաւակները. ասիկա մեր հայրերուն առաջին այցելութիւնն էր Եգիպտոս: Երկրորդ անգամին, Յովսէփ ինքզինք յայտնեց իր եղբայրներուն, եւ փարաւոնը ճանչցաւ անոր ազգատոհմը: Յովսէփ մարդ ղրկեց եւ բերել տուաւ իր հայրը՝ Յակոբը եւ ամբողջ գերդաստանը, ընդամէնը եօթնասուն հինգ հոգի: Յակոբ Եգիպտոս իջաւ եւ հոն ալ վախճանեցաւ, թէ՛ ինք եւ թէ՛ մեր հայրը, եւ բոլորին ալ մարմինները Սիւքեմ փոխադրուեցան եւ դրուեցան այն քարայրին մէջ, որ Աբրահամ Սիւքեմի մէջ դրամով գնեց Համորի որդիներէն:

Մեր ժողովուրդը աճեցաւ ու բազմացաւ Եգիպտոսի մէջ, մինչեւ մօտեցաւ այն ժամանակը, երբ Աստուած Աբրահամին տուած իր խոստումը պիտի կատարէր: Ապա Եգիպտոսի վրայ իշխեց արքայական ուրիշ տուն մը, որ Յովսէփի տան վայելած իրաւունքները չճանչցաւ: Նոր փարաւոնը մեր ազգին դէմ չարացաւ եւ մեր հայրերը չարչարեց՝ անոնց մանուկները գետը նետել տալով, որպէսզի մեռնին: Այդ ժամանակ էր որ ծնաւ Մովսէս, Աստուծոյ աչքին շնորհալի մանուկ մը, որ նախ երեք ամիս իր հօրը տունը մեծցաւ, իսկ երբ գետը նետեցին՝ փարաւոնին աղջիկը զայն գտաւ, որդեգրեց եւ մեծցուց: Մովսէս եգիպտական ամբողջ իմաստութեամբ կրթուեցաւ եւ ազգեցիկ եղաւ թէ՛ խօսքով եւ թէ՛ գործով: Երբ քառասուն տարիքը բոլորեց, որոշեց իր ազգակից

Իսրայելացիներուն վիճակով հետաքրքրուիլ: Եւ տեսնելով որ անոնցմէ մին կ'անիրաւուի, գայրացաւ եւ անիրաւուածին վրէժը առաւ՝ սպաննելով Եգիպտացին: Կը խորհէր թէ իր ազգակիցները ասիկա իմանալով՝ պիտի հասկնան, թէ իր ձեռքով Աստուած պիտի փրկէ զիրենք. բայց անոնք չհասկացան: Յաջորդ օրը հանդիպեցաւ երկու ազգակիցներու, որոնք կը կուռէին, եւ փորձեց զանոնք հաշտեցնել, ըսելով, «Ո՛վ մարդիկ, իրարու եղբայրներ էք, ինչո՞ւ զիրար կ'անիրաւէք»: Իսկ ան որ իր ընկերը կ'անիրաւէր՝ մէկ կողմ հրեց զինք, պատասխանելով. «Ո՛վ քեզ մեր վրայ իշխան եւ դատաւոր կարգեց: Զի՞ստ ալ սպաննել կ'ուզես, ինչպէս երէկ սպաննեցիր Եգիպտացին»: Այս պատասխանին վրայ Մովսէս փախաւ եւ որպէս պանդուխտ ապրեցաւ Մադիամ կոչուած երկրին մէջ, ուր երկու մանչ զաւակ ունեցաւ:

Քառասուն տարիներ ետք, ահա Տիրոջ հրեշտակը իրեն երեւցաւ անապատին մէջ, Սինա լեռան մօտիկը, բոցավառ մորենիի մը մէջէն:

Մովսէս նախ զարմացաւ իր տեսածին վրայ. ապա երբ մօտեցաւ աւելի լաւ տեսնելու համար, Տիրոջ ձայնը ըսաւ. «Ես քու հայրերուդ Աստուածն եմ. Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի Աստուածը»: Մովսէս զարհուրած՝ չէր համարձակէր նայիլ: Տէրը անոր հրամայեց. «Կօշիկներդ ոտքերէդ հանէ՛, որովհետեւ այն հողը՝ որուն վրայ կը կանգնիս՝ սուրբ է: Տեսայ Եգիպտոսի մէջ իմ ժողովուրդիս չարչարանքները, լսեցի անոնց հեծութեան ձայնը եւ ահա իջայ որ փրկեմ զանոնք: Արդ, եկ՛ուր, քեզ Եգիպտոս պիտի ղրկեմ»: Այսպէս, այն Մովսէսը որ մերժեցին, ըսելով՝ «Ո՛վ քեզ մեր վրայ իշխան եւ դատաւոր կարգեց», Աստուած զայն որպէս իշխան եւ փրկիչ ղրկեց այն հրեշտակին միջոցաւ, որ Մովսէսի երեւցաւ մորենիին մէջէն: Մովսէս Եգիպտոսէն հանեց մեր ժողովուրդը, նշաններ եւ հրաշքներ կատարելով թէ՛ Եգիպտոսի մէջ, թէ՛ Կարմիր Ծովէն անցքին եւ թէ՛ անապատին մէջ քառասուն տարիներու ընթացքին: Նոյն Մովսէսն էր որ Իսրայելացիներուն ըսաւ. «Զեր մէջէն Աստուած ինծի պէս մարգարէ մը պիտի հանէ, անոր մօտիկ ըրէք»: Մովսէսն էր որ անապատին մէջ հաւաքուած մեր ժողովուրդին համար միջնորդութիւն կ'ընէր մեր հայրերուն եւ հրեշտակին միջեւ, որ Սինա լեռան վրայ անոր հետ խօսեցաւ: Ան էր որ Աստուծոյ կենսատու պատգամները տուաւ մեզի: Սակայն մեր հայրերը չուզեցին Մովսէսի հնազանդիլ, այլ՝ անտեսեցին զինք եւ սկսան Եգիպտոսը փնտռել: Ահարոնին ըսին. «Մեզի Աստուածներ չինէ, որպէսզի մեզ առաջնորդեն. որովհետեւ չենք գիտեր թէ ի՞նչ եղաւ այդ Մովսէսը, որ մեզ Եգիպտոսէն հանեց»: Նոյն այդ օրերուն հորթի կերպարանքով կուռք մը շինեցին, անոր գոհ մատուցանեցին եւ իրենց ձեռքով շինուած այդ կուռքով կ'ուրախանային: Աստուած ալ երես դարձուց իրենցմէ եւ ձգեց որ երկնային մարմինները պաշտեն: Այդ է պատճառը, որ մարգարէական գիրքը կ'ըսէ.՝

«Ո՛վ Իսրայելացիներ,

միթէ անապատին մէջ քառասուն տարի

ձեր գոհերն ու նուէրները ինծի՞ մատուցանեցիք:

Մոզորի վրանը եւ Ռեմֆանի՛

աստղ-աստուծոյն պատուներնբը շինեցիք

եւ անոց երկրպագութիւն ըրիք:

Այդ իսկ պատճառով

ձեզ Բաբելոնէն ալ անդին պիտի աքսորեմ՝»:

Գալով Վկայութեան Խորանին, մեր հայրերը անապատին մէջ շինեցին այնպէս՝ ինչպէս Մովսէսի հետ խօսող հրեշտակը պատուիրեց, եւ այն օրինակով՝ որ Մովսէսի ցոյց տրուեցաւ: Մեր հայրերը իրեց կարգին զայն ստացան իրենց հայրերէն եւ Յեսուի օրով իրենց հետ բերին այս երկիրը, որ գրաւեցին այն ազգերէն՝ որոնք Աստուծոյ օգնութեամբ դուրս քշուեցան մեր հայրերուն առջեւէն: Այսպէս, Վկայութեան Խորանը հասաւ մինչեւ Դաւիթի օրերը: Դաւիթ Աստուծոյ հաճութիւնը շահեցաւ եւ ուզեց յարմար վայր մը գտնել՝ Յակոբի Աստուծոյն տուն մը կանգնելու, եւ Սողոմոն այս տաճարը շինեց Աստուծոյ համար: Սակայն Բարձրեալն Աստուած ձեռագործ տաճարներու մէջ չէ որ կը բնակի, ինչ որ մարգարէն ալ կ'ըսէ.՝

«Երկիրնքն է իմ աթոռս,

իսկ երկիրը՝ ոտքերուս պատուանդանը:

Ի՞նչպիսի տուն պիտի շինէք ինծի համար,

– կ'ըսէ Տէրը,–

կամ ո՞ւր պիտի ըլլայ իմ հանգստավայրս.

Ձէ՞ որ այս բոլորը իմ ստեղծածներս են՝»:

Ի՞նչքան յամառ էք դուք, որ բնաւ չէք զղջար եւ Աստուծոյ կանչը չէք լսեր, եւ այսպէս միշտ Սուրբ Հոգիին կը հակառակիք, ինչպէս մեր հայրերը կ'ընէին անցեալին: Եղա՞ւ մարգարէ մը որ Զեր հայրերը չհալածեցին: Անոնք սպաննեցին բոլոր այն մարգարէները, որոնք կանուխէն պատմեցին Արդարին գալուն մասին. այն Արդարին, որ դուք ձեր ձեռքով մահուան դատապարտեցիք եւ սպաննեցիք: Կը պարծենաք որ հրեշտակներու ձեռքով ստացաք Օրէնքը, եւ սակայն բնաւ չկատարեցիք զայն:

Այս խօսքերը լսելով, ներկաները ներքնապէս զայրացան եւ սկսան իրեց ակուանները կրճատել անոր դէմ: Մինչ Ստեփանոս, Սուրբ Հոգիով լեցուած աչքերը երկինք բարձրացուց եւ տեսաւ զԱստուած իր ամբողջ փառքով, ինչպէս նաեւ Յիսուսը՝ Աստուծոյ աջին կանգնած, եւ ըսաւ.

– Ահա բացուած է երկինքը, եւ կը տեսնեմ Մարդու Որդին որ Աստուծոյ աջին կանգնած է:

Ատեան գտնուողները մեծ աղաղակ բարձրացուցին, դոցեցին իրենց ականջները եւ բոլորը միասին անոր վրայ յարձակեցան: Յետոյ զայն քաղաքէն դուրս հանելով՝ սկսան քարկոծել: Վկաները իրեց թիկնոցները կը յանձնէին երիտասարդի մը, որ Սողոմ կը կոչուէր: Մինչ անոնք կը քարկոծէին, Ստեփանոս այսպէս կ'աղօթէր.

– Տէ՛ր Յիսուս, ընդունէ՛ իմ հոգիս:

Յետոյ ծունկի եկաւ եւ բարձրաձայն աղաղակեց.

– Տէ՛ր, ներէ՛ իրենց այս մեղքը:

Եւ հազիւ ըսած՝ մահուամբ աչքերը փակեց:

Ստեփանոսի քարկոծումը պահանջողներէն մէկն ալ Սողոմն էր:

Նոյն օրը Երուսաղէմի եկեղեցւոյ դէմ մեծ հալածանք սկսաւ, որուն հետեւանքով՝ բացի առաքեալներէն բոլոր

միւսները ցրուեցան Հրէաստանի եւ Սամարիայի գիւղերը: Իսկ քանի մը բարեպաշտներ Ստեփանոսի մարմինը տարին թաղեցին, մեծ կոծ ընելով անոր վրայ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ
(12.24-26)

Վստահ գիտցէք, որ եթէ ցորենի հատիկը հողին մէջ չի յնայ եւ չմեռնի, ինք որպէս առանձին հատիկ կը մնայ, իսկ եթէ մեռնի՝ բազմաթիւ հատիկներ կու տայ: Ով որ իր անձը կը սիրէ՝ կը կորսնցնէ զայն, իսկ ով որ իր անձը կ'անտեսէ այս աշխարհի վրայ՝ զայն յաւիտեանական կեանքին համար պահած կ'ըլլայ: Ով որ ուզէ ինծի ծառայել՝ պէտք է ինծի հետեւի, եւ ինծի ծառայողը պիտի ըլլայ հոն՝ ուր ես կը գտնուիմ: Եւ Հայրս պիտի պատուէ ինծի ծառայողը:

ՆՈՐ ԱՐԱՐԱԾԸ

ՓՕԼ ԹԻԼԼԻՒ
ԹՈՐՊԱ. ԳՆՈՒՆԿ ԱՒ. Զ. Գ.

Առաջին մասը տե՛ս նախորդ թիւին մէջ — *Խմբ.*:

Եւ հիմա դարձեալ հարց կու տանք.
Ի՞նչ է այս Նոր Արարածը:

Նոր Արարածը չէ միայն Հին Արարածին տեղը առնող երեւոյթ մը: Այլ նորոգումն է Հինին, որ ապականած, եղծուած, երկփեղկուած եւ զրեթէ կործանած է, դեռ ոչ՝ ամբողջապէս: Փրկութիւնը չի կործաներ ստեղծագործութիւնը, այլ Հին Ստեղծագործութիւնը կը կերպարանափոխէ Նոր Ստեղծագործութեան: Արդ, Նորի մասին կրնանք խօսիլ նորոգման եռակի եզրերով, որոնք հետեւեալներն են. հաշտութիւն, միաւորում, եւ յարուսթիւն³:

Իր նամակին մէջ, Պօղոս առաքեալ Նոր Ստեղծագործութիւնը կը զօդէ հաշտութեան: Հաշտութեան պատգամն է. Հաշտուէ՛ Աստուծոյ հետ: Դադրէ՛ անոր թշնամի ըլլալէ, քանի ինք թշնամի չէ քեզի: Հաշտութեան պատգամը այն չէ, թէ Աստուած ինք պէտք ունի հաշտուելու: Բայց ինչպէ՞ս ինք հաշտուելու պէտքը ունենայ: Քանի Ի՛նքն է աղբիւրը եւ գօրութիւնը հաշտութեան՝ որո՞ւն պաշտօնը կրնայ ըլլալ զինք հաշտեցնել: Հեթանոսներ, հրեաներ եւ քրիստոնեաներ, ամէնքս ալ փորձած ենք եւ կը փորձենք զինք հաշտեցնել ծէսերով եւ Խորհուրդներով, աղօթքներով եւ պաշտամունքներով, վարք ու բարքով եւ բարեսիրութեան գործերով: Սակայն եթէ կը փորձենք նոյնը, եթէ դեռ կը փորձենք Իրեն բան մը տալ, ցուցադրել բարի արարքներ, որոնք կը միտին զինք մեղմելու՝ ապա կը ձախողինք: Երբեք բաւարար չէ. երբեք չենք կրնար զինք գոհացնել, քանի որ անսահման է մեզմէ ակնկալուածը: Եւ քանի չենք կրնար զինք մեղմացնել՝ Իրեն դէմ թշնամական կը դառնանք:

Երբեք նկատած էք, թէ որքա՛ն թշնամութիւն կը բնակի բարի եւ պարկեշտ մարդոց հոգիներու խորքերուն մէջ,

անոնց՝ որոնք կը գերազանցեն բարեսիրութեան գործերու, բարեպաշտութեան ու կրօնական նախանձախնդրութեան մէջ: Այլ կերպ չի կրնար ըլլալ ասիկա. քանի մարդը գիտակցաբար կամ անգիտակցաբար թշնամի է հանդէպ անոնց՝ որոնց կողմէ մերժուած կը զգայ ինքզինք: Ամէն ոք այս կացութեան մէջ է, ինչ ալ կոչէ զինք մերժողը. «Աստուած» կամ «բնութիւն» կամ «ճակատագիր» կամ «ընկերային պայմաններ»: Ամէն ոք թշնամութիւն ունի ընդդէմ գոյութեան, որուն մէջ նետուած է, ընդդէմ թաքուն ուժերուն, որոնք իր կեանքին եւ տիեզերքի ընթացքը կ'որոշեն, ընդդէմ անոր՝ որ զինք յանցաւոր կը հանէ, եւ յանցաւորութեան պատճառով՝ կը սպառնայ կործանել զինք: Մենք ամէնքս ալ մերժուած կը զգանք եւ թշնամի ընդդէմ անոր որ մեզ մերժած է: Ամէնքս ալ կը փորձենք զայն մեղմել եւ երբ կը ձախողինք՝ աւելի թշնամի կը դառնանք: Ասիկա կը պատահի յաճախ առանց նկատուելու մեր կողմէ: Բայց կան երկու ախտանշաններ, որ մենք դժուար թէ կարենանք անտեսել. մենք մեզի հանդէպ թշնամութիւնը եւ թշնամութիւնը հանդէպ ուրիշներու: Յաճախ կը խօսուի մարդոց հպարտութեան, յիպոքրիզիսի, ինքնահաւանութեան եւ ինքնահաճութեան մասին: Սակայն, շատ պարագաներու, ասիկա մակերեսային մակարդակն է իրենց գոյութեան: Ասոր ներքեւ, աւելի խորքին, կայ ինքամերժում, նոզկանք, եւ նոյնիսկ ատելութիւն՝ սեփական անձին հանդէպ: Աստուծոյ հետ հաշտուած ըլլալը կը նշանակէ հաշտուած ըլլալ մեր սեփական անձերուն հետ: Բայց մենք հաշտուած չենք մեր անձերուն հետ. մենք կը փորձենք մենք մեզ մեղմել: Կը փորձենք մենք մեզ աւելի ընդունելի ընել մեր սեփական դատաստանին առջեւ, եւ երբ կը ձախողինք՝ աւելի կը թշնամանանք մենք մեզի դէմ: Եւ ան որ ինքզինք մերժուած կը զգայ Աստուծմէ, եւ ան որ ինքզինք կը մերժէ՝ կը զգայ նաեւ թէ ուրիշներ ալ զինք կը մերժեն: Մինչ ճակատագրին եւ իր անձին հանդէպ իր թշնամութիւնը կը մեծնայ, նոյն ժամանակ ուրիշներու հանդէպ իր թշնամութիւնը կը մեծնայ: Եթէ յաճախ կը սոսկանք մեզի դաւաճանող մարդոց գիտակից կամ անգիտակից թշնամութենէն կամ մեր կողմէ սիրով (կարծեցեալ) կապուած մարդոց հանդէպ մեր թշնամութենէն, չմոռնանք հետեւեալը, թէ անոնք մեզմէ մերժուած կը զգան, եւ մենք ալ անոնցմէ մերժուած կը զգանք: Անոնք շատ փորձած են մեզի ընդունելի դարձնել իրենց անձերը, եւ ձախողած: Մենք ալ փորձած ենք մեր անձերը ընդունելի դարձնել անոնց՝ եւ ձախողած: Եւ թէ՛ մեր ու թէ՛ իրենց թշնամութիւնը մեծցած է: Հաշտուած ըլլալ Աստուծոյ հետ, միաժամանակ կը նշանակէ հաշտուած ըլլալ ուրիշներու հետ: Սակայն չի նշանակեր փորձել հաշտեցնել ուրիշները, ինչպէս նաեւ չի նշանակեր փորձել հաշտեցնել ձեր անձերը: Փորձէ՛ հաշտեցնել զԱստուծո: Պիտի ձախողիս: Այս է պատգամը. Նոր Իրականութիւն մը յայտնուած է, որուն մէջ դուն հաշտուած ես: Նոր Արարածին հետ հաղորդութեան համար՝ պէտքը չունինք բան մը ցուցադրելու: Հակառակ ցուցադրելու համար մեր ոչինչ ունենալուն՝ մեր հոգիները միայն պէտք է բաց ըլլան, որպէսզի ան իրը դարձնէ զանոնք:

Հաշտուած ըլլալը առաջին նշանն է Նոր Իրականութեան: Եւ միաւորուած ըլլալը՝ երկրորդ նշանը: Հաշտութիւնը կարելի կը դարձնէ միաւորումը: Նոր Ստեղծագործութիւնը այն իրականութիւնն է, ուր երկփեղկուածը միաւորուած

է: Նոր Արարածը յայտնուած է Քրիստոսի անձով, որովհետեւ անոր մէջ երկփեղկումը երբեք չյաղթեց իր եւ Աստուծոյ միութեան, իր եւ մարդկութեան միութեան, իր եւ իր անձին միութեան: Աւետարաններով տրուած անոր պատկերին ասիկա գերազգու եւ անսպառ ուժ մը կու տայ: Անոր մէջ մենք կը տեսնենք մարդկային կեանք մը, որ պահպանած է միութիւնը, հակառակ ամէն ինչին որ զինք քաշած է դէպի երկփեղկում: Ան է եւ կը փոխանցէ Նոր Արարածին ուժը, քանի որ է եւ կը փոխանցէ ուժը անհերձեալ միութեան մը: Հոն ուր Նոր Իրականութիւնը կ'երեւի՝ հոն մարդ միաւորուած կը զգայ Աստուծոյ, հիմքն ու իմաստը անհատի գոյութեան: Մարդ էակը, հին բացատրութեամբ, կը սիրէ իր ճակատագիրը իր ձեռքը առնել, իսկ մենք այսօր կ'ըսենք՝ քաջաբար յանձնառու ըլլալ մեր սեփական անձկութիւնը մեր ուսերուն վերջնելու: Այն ատեն է, որ մարդ կ'ունենայ զարմանալի փորձառութիւնը ինքզինքին հետ միաւորուածութեան, ոչ թէ հպարտութեան եւ ինքնագոհութեան, այլ խոր ինքնընդունման: Ինքնընդունման այն փորձառութիւնը սեփական անձը կը զգայ իբրեւ յաւիտենապէս կարեւոր, յաւիտենապէս սիրուած, յաւիտենապէս ընդունուած: Սեփական անձէն նողկանքը եւ ատելութիւնը անհետացած կ'ըլլայ: Կեանքին համար կեդրոն մը կայ, ուղղութիւն մը կայ, իմաստ մը կայ: Ամէն բուժում — մարմնական եւ հոգեկան — սեփական երկփեղկեալ ինքնութեան միութիւնը կը ստեղծէ:

Հոն ուր իրաւ բուժում կայ՝ այնտեղ Նոր Արարածն է, Նոր Ստեղծագործութիւնը: Սակայն իրաւ բուժումը հոն չէ, ուր մարմնին կամ հոգիին մէկ մասը միաւորուած կ'ըլլայ ամբողջին, այլ ամբողջը ինք, մեր ամբողջ գոյութիւնը, մեր ամբողջ անձնաւորութիւնը գտած կ'ըլլայ իր միութիւնը: Նոր Ստեղծագործութիւնը բուժարար ստեղծագործութիւն է, որովհետեւ սեփական անձին միաւորումը կ'արարէ: Նաեւ կ'արարէ ուրիշներու հետ միաւորումը: Հին Արարածի պարագային, ոչինչ աւելի զատորոշիչ ախտանիշ է քան մարդ էակին բաժանումը իր նմանէն: Արդ, չկայ աւելի տենչալին՝ քան ընկերային բուժումը, քան Նոր Արարածը պատմութեան եւ մարդկային յարաբերութիւններուն մէջ:

Կրօնքը եւ քրիստոնէութիւնը խստորէն կը մեղադրուին, թէ մարդկային պատմութեան միութիւն չբերին: Ո՞վ կրնայ ժխտել այս մարտահրաշխան ճշմարտութիւնը: Այսուհանդերձ, մարդկութիւնը դեռ կը գոյատեւէ: Գուցէ չգոյատեւէր մինչեւ այսօր, եթէ բաժանումի ուժը առյաւէտ նուաճուած չըլլար միաւորման, բուժման եւ Նոր Ստեղծագործութեան ուժով: Հոն ուր մարդ էակը կ'ընդունուի որպէս մարդ էակ, այսինքն՝ իր յատկանիշներով, նոյնիսկ երբ անձնական նողկանքը, կամ ցեղային առումով օտարութիւնը, կամ ազգային հակառակութիւնները, կամ տարբերութիւնները սեռի, տարիքի, գեղեցկութեան, գորութեան, գիտութեան, եւ բոլոր միւս անհաշուելի պատճառները բաժանումի՝ պէտք է յաղթահարել, այնտեղ Նոր Ստեղծագործութիւնը կ'ըլլայ: Մարդկութիւնը կը գոյատեւէ, որովհետեւ Նոր Ստեղծագործութիւնը կ'ըլլայ կրկին եւ վերստին: Եւ եթէ Եկեղեցին, որ Աստուծոյ ժողովածն է, գերագոյն նշանակութիւն մը ունի, ա՛յս է անոր նշանակութիւնը, թէ իր մէջ է, որ մարդ ընդ մարդու միութիւնը կը քարոզուի, կը խոստովանուի եւ կ'իրականանայ, նոյնիսկ

կոտորակումներով, տկարութիւններով եւ եղծումներով: Եկեղեցին տեղն է, ուր մարդ ընդ մարդու միութիւնը իրական դէպք է, հակառակ անոր որ Աստուծոյ Եկեղեցին անդադար տեսած է եկեղեցիներուն անհաւատարմութիւնը: Թէեւ անհաւատարմութիւն տեսած եւ վանուած՝ սակայն Նոր Ստեղծագործութիւնը կը փրկէ եւ կը պահպանէ այն (հասկնալ՝ եկեղեցիները, մարդկութիւնը եւ պատմութիւնը), որ իրեն հանդէպ անհաւատարիմ գտնուած է եւ զինք վանած է:

Եկեղեցին, նման իր բոլոր անդամներուն, Նոր Արարածէն կը մոլորի դէպի Հին Արարածը: Արդ, Նոր Ստեղծագործութեան երրորդ նշանը յարութիւնն է: «Յարութիւն» բառը շատերու համար կը նշանակէ մեռած մարմիններուն իրենց գերեզմանները ձգելը, կամ այլ մտացածին պատկերներ: Սակայն յարութիւնը կը նշանակէ յաղթանակը իրերու Նոր վիճակին, Նոր Արարածի ծննդեան՝ Հին Արարածի մահուան վրայ: Յարութիւնը դէպք մը չէ, որ պիտի պատահի հեռուոր ապագայի մը մէջ, այլ անիկա Նոր Արարածին ուժն է մահէն կեանք ստեղծելու, այստեղ եւ հիմա, այսօր եւ վաղը: Հոն ուր Նոր Արարածն է, այնտեղ յարութիւն կ'ըլլայ, այսինքն՝ ժամանակի իւրաքանչիւր պահը յաւիտենապէս կ'արարուի: Հին Արարածին նշանն է քայքայումը կամ մահը: Նոր Արարածը հինին վրայ նոր նշան մը կը դնէ: Քայքայումին կամ մահուան վրայ յաւիտենական նշանակութեամբ ծնունդ մը կ'արարէ: Ինչ որ մխրճուած է կազմալուծման մէջ՝ կը բարձրանայ Նոր Ստեղծագործութեան մէջ: Յարութիւնը հիմա կ'ըլլայ, կամ՝ երբեք: Անիկա կ'ըլլայ մեր մէջ եւ մեր շուրջ, հոգիին ու պատմութեան, բնութեան եւ տիեզերքին մէջ:

Հաշտութիւն, միաւորութիւն, յարութիւն. ասիկա Նոր Ստեղծագործութիւնը, Նոր Արարածը, իրերու Նոր վիճակն է: Մենք կը մասնակցի՞նք անոր: Քրիստոնէութեան պատգամը քրիստոնէութիւնը չէ, այլ Նոր Իրականութիւնը: Իրերու Նոր վիճակ մը յայտնուած է ու տակաւին կը յայտնուի. անիկա թաքուն է եւ տեսանելի, հոն է եւ հոս է: Ընդունէ՞ գայն, մտիր անկէ ներս, ձգէ որ անիկա քեզ իր մէջ առնէ:

(Շար. 2 եւ վերջ)

ՄԱՆՕԹԱԳՐԱԿԱՆ

3.- Ճառիս այս փանի մը նախադասութիւնները քարգմանութեան առջեւ կը կանգնեցնեն խնդիր մը: Կը մէջբերեմ բնագրէն. «Therefore we can speak of the New in terms of a re-newal: the threefold "re", namely, re-conciliation, re-union, re-surrection»: Այս «re» մասնակցներուն հայերէնը՝ «կրկին» կամ «վերստին» իմաստով «վեր» կամ «վերա» մասնակցն է: Հակառակ անոր որ «renewal» բառը երբեմն «վերանորոգում», այսինքն՝ կրկին կամ վերստին նորոգում իմաստով քարգմանուած է, այստեղ կարելի չէ, փանի որ յօդուածին մտածողութիւնը եզակի «դէպք» ինչ կը վերաբերի, եւ այն «դէպք» Նոր Արարածին յայտնութիւնն է Յիսուսի անձով: Եւ այն «դէպք» ինչ հետ «ժամանակի իւրաքանչիւր պահը յաւիտենապէս կ'արարուի»: Ուրեմն, «re»-ն այստեղ անդր-ժամանակային «կրկին եւ վերստին»-ն է, այսինքն՝ «յաւիտենապէս»-ը, այլ խօսով՝ յաւիտենակցին կը յղէ: Միւս բառերը: «Reconciliation»-ը աւանդութիւն է կարգով «հաշտութիւն» իմաստով եւ Թիլլիս այս իմաստով ալ գործածած է, առաել՝ փանի կապած է անկրկնելի «դէպք»-ին, ապա կրկնութեան եզրը չէ աշխատուցած: Նոյնն է պարագան «reunion»-ին: «Resurrection»-ը սկիզբէն «յարութիւն» նշանակած է, եւ երբեք իր մէջ չէ ունեցած «կրկին» կամ «վերստին» իմաստները: Այս ալ միւս բառերուն պէս պահուած է Նոր Արարածի եզակի յայտնութեան գաղափարին հաւատարիմ: